



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019թ.

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՐԱԶՅԱՆԻՆ

ք.Ալավերդի, Սանահին Սարահարթ 2 շենք, 28 բն.21

Ձեր 01.11.2019թ. թիվ LR2E-1E3F-3B89-CD2D տեղեկատվության հարցմանը.

Հարգելի՛ պարոն Աբազյան,

Հայտնում եմ, որ Ռոզա Գրիգորի Աբազյանի ընտանիքը ընդգրկված է եղել Լեռնապատ համայնքի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում 5 անձով՝ ինքը՝ Ռոզա Գրիգորի Աբազյանը, **Անուշավան Վոլոդյայի Աբազյանը**, Մարինե Սանասարի Ներկարարյանը, Ալվարդ Անուշավանի Աբազյանը, Անի Անուշավանի Աբազյանը: Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների հատկացման հարցերով հանձնաժողովի 12.10.2011թ. նիստի որոշմամբ՝ Ռոզա Աբազյանի ընտանիքը հանվել է Լեռնապատ համայնքի պետական աջակցությամբ իրականացնող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակից, որի վերաբերյալ Ռ.Աբազյանը իրազեկվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.11.2011թ. թիվ 03/13.1/5802-11 գրությամբ:

Ձեր դիմումում բարձրացված մյուս հարցերի վերաբերյալ ներկայացնում եմ տեղեկատվություն.

1-ին կետի վերաբերյալ հայտնում եմ, որ Դուք ներկայումս ընդգրկված չեք Լեոնապատ համայնքի պետական աջակցությամբ իրականացնող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակում:

2-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերում վթարային տների ամրացման, բարելավման ծրագրեր չեն իրականացվում:

3-րդ և 4-րդ կետերի վերաբերյալ հայտնում եմ, որ 2008թ. դեկտեմբերի 15-ին Դուք ընդգրկված եք եղել Լեոնապատ համայնքի պետական աջակցությամբ իրականացնող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում՝ որպես Ռոզա Գրիգորի Աբազյանի ընտանիքի անդամ: Վերոնշյալ հանձնաժողովի 12.10.2011թ նիստի որոշմամբ Ռոզա Աբազյանի ընտանիքը հանվել է Լեոնապատ համայնքի պետական աջակցությամբ իրականացնող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակից:

5-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ կառուցապատման նպատակով հողամասը Ձեզ տրամադրվել է 1990-ական թվականների սկզբին, քանի որ Դուք այդ ժամանակ համարվել եք որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիք:

6-րդ կետի վերաբերյալ՝ ինչպես վերը նշվել էր ներկայումս իրականացվող պետական բնակարանաշինական ծրագրերում Ռ.Աբազյանի ընտանիքը ընդգրկված չէ, ուստի պետական միջոցներով այդ հողատարածքում բնակարանի շինարարություն պետական բյուջեի միջոցներով նախատեսված չէ:

7-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ Ձեր բնակարանի վթարային վիճակը 4-րդ կարգից դարձել է 3-րդ կարգ ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից մասնագիտական լիցենզավորված կազմակերպության կողմից իրակացված ստուգման արդյունքում: Մարզպետարանը չի տնօրինում այդ փաստաթղթերը, դրանք ստանալու համար կարող եք դիմել քաղաքաշինության կոմիտե:

8-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ ներկայումս ՀՀ գյուղական բնակավայրերում պետական միջոցներով չի իրականացվում երկրաշարժի հետևանքով 3-րդ կարգի վթարային դարձած տների շինարարություն կամ վերանորոգում:

9-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ 2008թ. դեկտեմբերի 15-ից առ այսօր պետական միջոցներով չի իրականացվել 3-րդ կարգի վթարային տների շինարարություն:

Դուք կարող եք այցելել Լոռու մարզպետարանի կայք էջը՝ <http://lori.mtad.am/axet/>, որտեղ տեղադրված է Լեռնապատ համայնքի պետական աջակցությամբ իրականացնող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ